





ՊՍԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՄԻԱԽԱՌՆՈՒՄԸ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՇՏՈՑՆԵՐՈՒՄ (ՄԻ ՁԵՌԱԳՐԻ ՇՈՒՐՋ)

Անահիտ Մխիթարեան

Ամուսնութեան եւ հարսանեկան արարողութիւնների մասին մենք տեղեկանում ենք ոչ միայն հայ մատենագրութիւնից ու ազգագրական նիւթերից, այլեւ ձեռագիր աղբիւրներից (ժողովածուներ, քարոզգրքեր ու կանոնագրքեր), յատկապէս՝ Մաշտոցներից, որտեղ ամբողջանում է եկեղեցու խորհուրդներից մէկը՝ Պսակի կարգը:

Ուսումնասիրութիւններից պարզուել է, որ կան Պսակի կարգին վերաբերող ձեռագիր նիւթեր, որոնք հիմնականում նոյնն են, ինչ տպագիր Մաշտոցներում, բայց կան եւ այնպիսիները, որոնք դուրս են մնացել տպագիր Մաշտոցներից, բայց, բարեբախտաբար, պահպանուել են: Եւ այդ պահպանուած պատառիկները ոչ միայն նորութիւն են իրենց բովանդակութեամբ, այլեւ արժէքաւոր՝ ե՛ւ արարողակարգերի յաւելումով, ե՛ւ մեկնութիւններով:

Ուշագրաւ են յատկապէս նմանատիպ ձեռագիր Մաշտոցները, որտեղ աւելի է դրսեւորւում ծէսի հնագոյն լինելը: Դրանք նաեւ մեծ արժէք են ներկայացնում թէ՛ հայ մատենագրութեան պատմութեան եւ թէ՛ ազգագրութեան համար: Ընդ որում, իւրաքանչիւր ազգագրական շրջան կամ պատմաաշխարհագրական վայր այն կատարում է իր բարքերի ու սովորոյթների համաձայն. անգամ այդ տարբերութիւնները դրսեւորւում են եկեղեցական արարողութիւններում: Դրանով էլ հէնց պայմանաւորուած են ձեռագիր Մաշտոցների տարբերութիւնները:

Մենք անդրադարձել ենք դրանցից մէկին, որի մէջ պսակի արարողութիւնը հիմնականում ներկայացուած է շարականներով, որտեղ միախառնուել են նաեւ ժողովրդական տարրերը: Խօսքը ԺԷ., ԺԸ. դարերի ձեռագիր Մաշտոցի մասին է, որը գրուել է Կաֆայում, իսկ յետագայում ընդօրինակուել է Նախիջեւանում[1]:

Ստորեւ ներկայացնում ենք շարականները, բայց ոչ ամբողջութեամբ. որոնց գլուխներից պարզ է դառնում նիւթի ծիսական բովանդակութիւնը:

Մաշտոցներում սովորաբար տեղ են գտել բնոյթով ու թեմատիկ նիւթով համապատասխանաբար ընտրուած շարականներ, սաղմոսներ ու աստուածաշնչեան հատուածներ, որոնք կատարւում են եկեղեցում Պասկի կարգի ժամանակ:

Գլուխ Ա. Շարական նշան աւրհնութեան (1ա)՝

«Նշանաւ յամենայաղթ խաչիւըդ Քրիստոս, պահպանեա՛ զմեզ մարդասէր, յաներեւոյթ թըշնամւոյն, զի դու միայն ես թագաւոր փառաց, աւրհնեալ յաւիտեան"»:

Նշանօրհնէքի արարողութեան ժամանակ եկեղեցում հնչում են շարականներ, սաղմոսներ ու աղօթքներ, որոնց բովանդակութիւնը համապատասխանում է արարողութեանը: Պարզապէս պէտք է յիշենք, որ ըստ քրիստոնէական մեկնաբանութեան՝ եկեղեցին նմանեցուած է հարսի, իսկ Քրիստոսը՝ փեսայի:

---

1 ՄՄ, ձեռ. 8406, *Մաշտոց ձեռաց*: ԺԷ., ԺԸ. դդ.: Նախիջեւան: Էջ 1ա-109ա: Ձեռագիրն ունի յիշատակարան, որը գրուել է յետագայում՝ ԺԸ. դարում, իսկ ծիսական նիւթը ԺԶ.-ԺԷ. դարի է:

Նշանօրհնէքը կատարուել է ե՛ւ եկեղեցում, ե՛ւ տանը, եւ անհրաժեշտ էր, որ այն. կատարուէր մինչ պսակը: Կան ազգագրական որոշ շրջաններ՝ մինչ այժմ էլ պահպանուած, ուր նշանդրէքը կատարւում է աղջկայ տանը: Օրինակ՝ Մուշ քաղաքում տղայի հարազատները քահանային հրաւիրել են աղջկայ տուն, որպէսզի օրհնի նշանը, որտեղ էլ կատարուել է «Հաց կտրելու» ծէսը, այսինքն՝ եկեղեցական արարողութիւնը կատարուել է տանը[2]:

Սա մեզ յիշեցնում է Թոնրի կամ Օջախի պսակը: Դեռեւս հնում սրբազան արարողութիւնները՝ նշանադրութիւն, պսակ, կատարուել են նաեւ օջախի, թոնրի շուրջ, քանի որ դրանք համարուել են սրբութիւն, եւ համահաւասար են դիտուել եկեղեցական պսակին: Այսինքն՝ բացի աւանդական նշանադրութիւնից, պահպանուել են նշանադրութեան վաղնջական ձեւերը:

Գլուխ Բ. Փեսատեսուն առնելոյ (2ա)՝

«Թագաւոր գոլով քո յաշխարհ, մըտեր ի քաղաքն Երուսաղէմ, նըստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի, կոչել զհեթանոսս յերկրպագութիւն»:

Այս շարականը բուն կրօնաեկեղեցական նկարագրական պատկեր է, որտեղ Քրիստոսին՝ որպէս Թագաւոր, դիմաւորում էին խմբերով՝ ձիթենու եւ արմաւենու ճիւղերը ձեռքներին ուրախ աղաղակելով: Այդպէս մեծ շուքով ու ցնծութեամբ, ծնծղայով ու հոգեւոր երգերով, դիմաւորում են նաեւ Թագաւոր-փեսային եկեղեցում, ուստի, պատահական չէ այս շարականի համապատասխան ընտրութիւնը: Իսկ եկեղեցուց դուրս նոյնպիսի ցնծութեամբ, զուռնայ-դհոլով գնում են փեսայի տուն, որտեղ եւ կատարւում են մի շարք արարողութիւններ:

2 Տե՛ս Ե. Լալայեան, *Մուշ-Տարօն*,- «Ազգագրական հանդէս», XXVI գիրք, Թիֆլիս, 1917, էջ 158:

Գլուխ Գ. Փեսան զաւաթն բաժանէ (2բ)՝

«Այսօր ցնծայ եկեղեցի ի հոգեւոր հարսանիսն,
զոր պատրաստեաց ձայն բարբառոյ հարսն մաքուր փեսային…
Այսօր փեսաւէրն[3] եւ բարեկամն ընդ երկնաւոր փեսային
միաւորեաց զեկեղեցի՝ փոխադրելով ի յերկինս»:

Սա ժողովրդական արարողութիւն է, երբ փեսան բաժանում է գաւաթները, եւ այն կոչւում է Գինիթափէք կամ Գինեթափէք: Հինգշաբթի երեկոյեան տղամարդկանց կողմից ընտրւում էր մառանապետ, որն իր օգնականների հետ գինին կարասից փարչերի ու գաւաթների մէջ էր լցնում եւ հիւրասիրում հաւաքուածներին: Իսկ յաջորդ օրը՝ ուրբաթ առաւօտեան, փեսան ու ազապները այցելում էին այն տները, որոնց հրաւիրում էին հարսանիքի (սա հրաւէրքի մի ձեւ էր)՝ տանտիրոջն առաջարկելով մի բաժակ օղի կամ չոր մրգեր: Ով ընդունում էր հրաւէրը, խմում էր մի թաս գինի, իսկ ով մտադիր չէր, մերժում էր՝ ասելով. «Աստուած շնորհաւոր անէ»[4]:

Գլուխ Դ. Յորժամ բաղանիք երթան փեսան, խաշլուն[5] եւ այլք. քահանայն ջուր աւրհնէ (3բ)՝

Լոյս ի լուսոյ ի հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն…
Ըզքեզ, որ հոգով եւ հրով մաքրեցեր ըզմարդկան աղտաղութիւն,

3 **Փեսաւէր.** նշանակում է՝ փեսահրաւէր. փեսայատու կամ փեսայաբեր. բարեկամ փեսայի. տարող փեսայի առ հարսն կամ հարսին առ փեսայ. գլխաւոր 'ի հարսանիս (տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ, Եր., 1981, էջ 941):

4 **Ե. Լալայեան**, *Վայոց Ձոր*,- «Ազգագրական հանդէս», հտ. XI, գիրք XIII, Թիֆլիս, 1906 թ., էջ 151:

5 **Խաշլու**, գւռ. խաչլու, այսինքն՝ «կնքահայր»: Տե՛ս **Հր. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Երեւան, 1973, էջ 334:

որպէս զԱստուած եւ զՓըրկիչ՝ ամենեքեան աւրհնեսցէք:
… Զհին մարդըն նորոգելով՝ Փրկիչն ի մկրտութիւն գայ այսօր,
զի զապականեալ ըզբնութիւն ըզչրով, նորըս գործեսցէ
անապական ըզգեստ փոխարէն տալով մեզ:
Մըկրտի Քրիստոս եւ սըրբին ամենայն արարածք
եւ տայ մեզ թողութիւն ջրով եւ հոգով՝ վերայ սըրբելով ըմե[զ]:

Սա Փեսաբաղնիքի ծէսն է, որը հնում ժողովրդի մօտ շատ տարածուած է եղել: Օրինակ՝ Մուշ քաղաքում ազապները բոլորը միասին գնում էին բաղնիք, լողանում, բայց՝ առանց քահանայի[6]:

…Աւարտ բանիս առնու էրիցն Գ.Գ. թաս ջուր, լընու գլուխ նախ՝ խաշլուին եւ ապա՝ փեսին (այսինքն՝ երեք թաս՝ խաչեղբորը, երեք թաս՝ փեսային): Խաշլուն ալ լնու փեսին, փեսան ալ՝ խաշլուին:

Թէ՛ հարսի եւ թէ՛ փեսայի լողանալու ժամանակ նրանց տակ մի կտոր երկաթ էին դնում, որպէսզի չարքերը չվնասէին: Լողանալուց յետոյ ազապները հագցնում էին փեսացուին՝ նրան գովերգելով, իսկ ջահել աղջիկները՝ ծաղկոցաւորները՝ հարսին: Սա հարսանիքի ժամանակ կատարուող ծիսական լոգանքն է, որը խորհրդանշում է ոչ միայն մաքրագործում, այլեւ պտղաբերում:

Նախքան պսակի խորհուրդի կատարելը, փեսան պարտաւոր էր լողանալ, սափրուել, այսինքն՝ մաքրուել մարմնով եւ յատկապէս մաքրագործուել ջրով.

«Ջրով կիզու զմեղըս մեր՝ զի ապականեալ ըզբնութիւն ըչրով նորըս գործեսցէ»:

Իսկ հոգին մաքրելու համար եկեղեցում կատարում էին խոստովանութիւն թէ՛ հարսը եւ թէ՛ փեսան:

6 **Ե. Լալայեան**, *Մուշ-Տարօն*, էջ 166:

Այժմ այս ծէսը չի պահպանուել, դրանից մնացել է միայն Փեսաթրաշի ծէսը: Սակայն մեզ չի հանդիպել դեռ մի Մաշտոց, որտեղ քահանան մասնակցի փեսային լողացնելու արարողութեանը եւ օրհնի ջուրը:

Ջուրը՝ որպէս պաշտամունքային տարր, հանդէս է գալիս կենցաղում եւ մարդու կեանքի երեք տարբեր փուլերում. ծնունդի ժամանակ՝ Մկրտութեան ծէսով, հասունացման ժամանակ՝ Հարսանեկան ծէսով եւ մահուան ժամանակ՝ Թաղման ծէսով: Ծիական այս երեք արարողութիւնների ժամանակ ոչ միայն լողացնում, մաքրում են ջրով, այլեւ նոր հագուստ են հագցնում. այսպէս արւում է եւ գաղտնածխութեան ժամանակ, այսինքն՝ մտնում են նոր աշխարհ:

Այս վերջին երեք արարողութիւնները (գլուխ Բ, Գ, Դ) չկան Մաշտոցներում, բայց, փաստօրէն, եղել են որպէս եկեղեցական կանոններ կամ, գուցէ, ժողովրդական արարողութեան ազդեցութիւնն այնքան ուժեղ է եղել, որ դրանք ներառուել են Մաշտոցներում:

Գլուխ Ե. Յարսանեաց գիր օրէն[7]. Խրատ (4բ)

Կամաւ կամեցողին բարեաց Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի աւրհնելոյն յաւիտեանս. ամէն: Որ եղեւ այս շնահաւոր հա[ր]սանեաց գիրս ի տիրապահ եւ աստուածախնամ մայրաքաղաքիս Կաֆայու: Ընդ հովանեաւ ամէնաւրհնեալ չարխաբան սրբուհոյ Աստուածածնին եւ առ ի թուականութիւնս հայոց ՌՃԼ-ին եւ ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի տէր Ղազար տեառնապսակ սրբազան կաթուղիկոսին Հայոց: Եւ առաջնորդութեան նահանգիս մերոյ Կաֆայու տէր եւ աւագ իրիցութեան եւ երեսփոխանութեան մահտե[ս]եաց, զոր եկն առաջի աստուածային օրինացն: Այս անուն խնդրեաց գիր

7 Մէկ այլ ձեռագրում այն կոչւում է «Հարսանեաց պայմանագիր»՝ գրուած 1689 թուին (ՄՄ, ձեռ. 8433, *Մաշտոց ձեռաց*, Կաֆայ):

սիրեցեալ եւ նազելի սիրասնունդ դուստրն իւր ----- որդոյն իւրոյ ----- օրինաւոր ամուսնութեան, զոր Տէր Աստուած շնահաւորս արասցէ. ամէն:

Սա հարսանեաց մի պայմանագիր է, որը կնքուել է 1741 թուականին Կաֆայ քաղաքում Սուրբ Էջմիածնի տէր Ղազարի հայրապետութեամբ: Պայմանագրում նախ՝ քահանայից խնդրում են աստուածային օրհնութիւն՝ ամուսնացող զոյգերին, ապա՝ աղօթք եւ օրհնութիւն «մարմնաւոր արդեանցն», այսինքն՝ օժիտին, որը մէկ առ մէկ թուարկւում է պայմանագրում.

Նախ կուտայ զիւր սիրեցեալ դստերն զաստուածային աւրհնութիւն եւ քահանայից աղօթքն եւ մարմնաւոր արդեանցն, զոր պատրաստեալ է, այս է՝ սինէպէնդ, էն սէլիկ, զիլիֆլըխ, ծամ՝ մազի վրայի, տօնլխ, զինճիլ, մարքրտէ խաֆեզ, բ. ճիւֆտ օղ, ճիվանխաշի գօտի, պալղամի գօտի, դ. մատանի, արծաթէ խուտի, ե. խումաշ կապայ, ե. զըպուն, մէկալ պոյ քուրքի, որ մայչէմպէր, բ. տօշակ, դ. բարձ, մէկ քուֆտ սավան, ա. տիպայ եօղան, բ. երեսսրբիչ, բ. քուֆտէրէս բարձ, է. շապիք, մէմալ խալա շապիք, դ. պոյն չայ, սունտուկ, խալի, ճէ հալի սինի, բաղնէց լէկէն, էլ լէկէնի, էլ ըպրըխի, դաս քիլտան եւ այլ աստուածային օրհնութիւն:

Ըստ Տաթեւացու մեկնութեան. «Եւ դարձեալ՝ որպէս մարմնաւոր հարսին տուեալ լինին երեք իրք. այսինքն՝ բաժինք, օժիտ եւ պարգեւք: Բաժինքն տուեալ լինին Ի հօրէ հարսինն վասն պիտոյից պսակին: Եւ օժիտքն Ի փեսայէն լինին տուեալ: Իսկ պարգեւքն Ի բարեկամացն լինին տուեալ»[8]:

Նմանատիպ պայմանագրեր միջնադարում շատ են կնքուել ու կիրառուել, որոնք նաեւ իրաւական հիմքեր ունեն:

Արարողութեան վերջում աւում է «Այսօր ցնծայ եկեղեցի» շարականը:

Գլուխ Զ. Հանդերձ աւրհնելոյ (6ա)՝ սկսւում է «Թագաւոր գոլով քո յաշխարհ» շարականով:

Այնուհետեւ ընթերցւում են հանդերձօրհնէքին վերագրեալ աստուածաշնչեան հատուածները.

Ցնծասցէ անձն իմ 'ի Տէր. զի զգեցոյց ինձ զհանդերձ փրկութեան՝ եւ զպատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի եդ ինձ զպսակ. եւ իբրեւ զհարսն զարդու զարդարեաց զիս: եւ իբրեւ զերկիր՝ որ աճեցուցանէ զծաղիկս իւր. եւ իբրեւ զպարտէզ, որ բուսացանէ զսերմանիս իւր (Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ):

Ըստ Տաթեւացու մեկնութեան՝ եկեղեցում հարսին տրուող զարդերը պէտք է թուով եօթը լինեն[9]:

Հանդերձօրհնէքի արարողութիւնը կատարուել է թէ՛ եկեղեցում եւ թէ՛ տանը, որի ժամանակ քահանան օրհնել է հարսնացուի ու փեսացուի հագուստները:

Եկեղեցում կատարւում է այս կերպ. մինչ աղջկայ եւ տղայի հարազատները բերում են հագուստը (որը կոչւում է նաեւ հանդերձ, հալաւ, քթեթ, փըթեթ կամ փաթեթ) քահանայի մօտ, քահանան կարդում է «Օրհնութիւն եւ փառք» աղօթքը եւ խնկարկելով ասում «Մայր լուսոյն Մարիամ անհարսնացեալ» շարականը:

Եկեղեցում նորապսակների հագուստներն օրհնելիս ընթերցւում են համապատասխան այլ շարականներ՝ «Այսօր ցնծայ եկեղեցի ի հոգեւոր հարսանիսն», «Ամենազօր Տէր թագաւոր թագաւորաց», որոնք նման են հարսանեկան միջնադարեան հոգեւոր երգերի եւ ունեն ընդհանրութիւններ ժողովրդական «Թագաւորագովքերի» հետ: Ահա դրանցից մէկը՝ ուշ միջնադարեան մի բանաստեղծութիւն, որը կոչւում է «Տաղ հարսանեաց եւ ուրախութեան, ընտիր եւ գեղեցիկ».

8 Գր. Տաթեւացի, *Ամառան հատոր*, Երուսաղէմ, 1998, էջ 202:

9 Նոյն տեղում:

Աստուած օգնէ թագաւորին, //
Բաշխէ բազում կենդանութիւն, //
Գիշեր ցորեկ իւր հովանին.
Աստուած օգնէ թագաւորին: //
Աստուած օգնէ նոր փեսային[10]:

Եկեղեցում հագուստներն օրհնելուց յետոյ տանում են նորապսակների տուն առանձին-առանձին:

Մաշտոցներում սովորաբար նորապսակների եւ նրանց հագուստի օրհնութիւնը կատարւում է միաժամանակ Պսակի արարողութեան ընթացքում:

Այս ձեռագրում (նմանօրինակ ձեռագիր մեզ չի հանդիպել) առանձին-առանձին են կատարւում «Թագաւոր աւրհնելոյ», «Նորահարս աւրհնելոյ», ինչպէս նաեւ «Թագաւորի եւ նորահարսի հանդերձօրհնէքի» արարողութիւնները:

Նոր հագուստի օրհնութիւնը եղել է անհրաժեշտ պայման, քանի որ օրհնութեան միջոցով քահանան փորձում է հագուստը կիրառողին զերծ պահել չար աչքից ու փորձութիւններից.

... Աւրհնեայ եւ սրբեա[յ] հանդերձս զայս, զի որք զգեցցեն զսա, մի՛ իշխեսցէ մերձենալ ի սոքա չար աղանդ դիւաց կամ կախարդաց, այլ ամրացեալ փրկեսցին ամենայն որոգայթից սատանայական զօրութեամբ սուրբ խաչիւ քոյ:

Ընդհանրապէս, թէ՛ նորը եւ թէ՛ առաջինն ունեն ծիսահմայական յատկութիւններ. երկուսն էլ ինչ-որ բանի սկիզբ են: Ուստի, պէտք է կատարուէին հմայծիսական գործողութիւններ՝ հեռացնելով չարը, անյաջողը եւ, ընդհակառակը՝ առաջ բերելով բարին, յաջողութիւնը: Դրանով է պայմանաւորուած նաեւ ծիսական երգերի, պարերի, աղօթքների, բարեմաղթանքների ու օրհնանքների կատարումը, անգամ համայնքի ծիսական կերուխումը՝ որպէս զոհաբերութիւն:

Գլուխ Է. Թագաւոր աւրհնելոյ[11] (8ա)՝

Որ զերկնաւոր թագաւորութեանդ քո զօրինակ ցուցէր ի յերկրի՝ հաստատելով զարինակ ցուցէր ի յերկրի՝ հաստատելով զաթոռ թագաւորութեան... Սիրոյ անմահ եւ երկնաւոր սուրբ փեսային եկեղեցոյ. փեսաւէր եւ հրաւիրակք առաքեցար հարսին որդուոց թագաւորին առ Քրիստոս:

*Ըստ շարականների մեկնութեան՝ սա վերագրւում է Թէոդոսի թագաւորին. «Զշարական թագաւորաց, զոր սովորաբար օրինակք մակագրեն՝ Թէոդոսի թագաւորին... Յաղագս գործոց եւ աստուածարին... Յաղագս գործոց եւ աստուածահաճոյ կենցաղավարութեան մեծին Թէոդոսի՝ զորս եւ շարակնս առնու ի գոսի՝ զորս եւ շարակնս առնու ի գոսի՝ զորս եւ շարակնս առնու ի գ

նրան չար ուժերից պահպանող արագահաս սուրբ Սարգիս զորավարին ուղղուած օրհնաբանութիւն է:

Սուրբ Սարգիսը կրօնական պատկերացումներում ի յայտ է գալիս արագավազ ու ճերմակ նժոյգի վրայ զինուած[14] (մանրանկարներում յաճախ տեսնում ենք վիշապ օձին սպանելիս): Ժողովրդի պատկերացումներում սուրբ Սարգիսը սիրահար զոյգերի կամ նոր ամուսնացող զոյգերի պահապան սուրբն է: Դրա համար էլ նրա մասին յիշատակւում է հարսանեկան շարականներում:

Սուրբ Սարգսի նախատիպը հասնում է մինչեւ առասպելական անցեալ. դա վիշապամարտի դրսեւորումն է, որի գաղափարն արտայայտուել է թէ՛ էպոսում, թէ՛ հեքիաթներում ու առասպելներում եւ թէ՛ հարսանիքներում[15]:

Հայկական հարսանիքներում նորապսակներին պահպանելու դերը ստանձնում են թագաւորցիք, որոնց ասում են նաեւ զինուորներ կամ զինակիր ազապչարիներ: Նրանք հանդէս են գալիս որպէս փեսայի թիկնապահներ՝ պահպանելով փեսայի պատիւը, ձեռնարկելով ամէն տեսակ նախազգուշական միջոցներ, որպէսզի հարսանեկան հանդէսների ժամանակ չվտանգուի նոր զոյգի ապագայ բեղմնաւորութիւնն ու բախտաւորութիւնը չար մարդկանց կողմից: Ազգագրական որոշ շրջաններում (Մուշ, Վասպուրական, Ջաւախք) անգամ պարզորոշ կերպով դրսեւորւում էր նրանց՝ զէնքով ու զրահով զինուած պաշտպանիչ դերը:

Պատահական չէ շարականներում թագաւորների (նաեւ սրբացուած թագաւորների) գովքն ու գովերգութիւնները, որոնք էլ հէնց աշխարհիկ թագաւորագովքերն են:

14 *Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, հտ. Բ, Վենետիկ, 1874, էջ 280:

15 Տե՛ս **Ա. Մխիթարեան**, *«Երգ երգոցը» որպէս հարսանեկան հնագոյն մի ծէս*.- ՀԱ., Վիեննա, 2008, էջ 358:

Գլուխ Ը. Պսակի արարողութիւն (10ա)[16]

Սա բուն պսակն է, որի ժամանակ կատարւում է նաեւ ձեռնտուութեան *արարողութիւնը եւ* յանձնառութեան *խոստումը:*

Ձեռնտուութեան *արարողութեան ժամանակ, հարսին ու փեսային կանգնեցնելով դէմ դիմաց, քահանան հարսի աջ ձեռքը դնում է փեսայի աջ ձեռքին՝ ասելով հետեւեալ բառերը. «Առեալ զձեռն Եւայի...», այսինքն՝ հարսին յանձնելու առաջին քայլն է արւում՝ ձեռքը տալով[17]:*

Այնուհետեւ յաջորդիւ հնչում են շարականներ, աղօթքներ եւ խրատներ, որից յետոյ ձեռնտուութեան արարողութեանը յաջորդում է յանձնառութեան *խոստումը, այսինքն՝ թէ՛ հարսը եւ թէ՛ փեսան պէտք է յանձն առնեն՝ հնազանդ լինել եւ ամուր պահել իրենց սէրն ու միութիւնը.*

Առաջի այս քահանայիս եւ առաջի այս տօլվաթաւոր տանուտէրացս վկայութեամբն եւ սուրբ Լուսաւորչին կանոնքն, տէ՛ր ես, դս[տ]րիկ, տէ՛ր ես... (11բ):

Ինչպէս տեսնում ենք, այս խոստովանութիւնը մի փոքրիկ ծէս է, որը կատարւում է քահանայի, տանուտէրի եւ սուրբ Լուսաւորչի կանոնների վկայութեամբ եկեղեցում, եւ նրանցից իւրաքանչիւրը կրկնում է երեք անգամ:

Պսակի արարողութեան ժամանակ ամէն մի զոյգի միութիւնն արարող ու տիեզերական է համարւում, եւ այն յիշեցնում է երկնքի ու երկրի առասպելական միութիւնը: Հարսանեկան իւրաքանչիւր ծիսական արարողութիւն ունի խորհրդանշական իմաստ, այսինքն՝ վերականգնւում է նախնական կորսուած ծէսը:

Ձեռագիրն այստեղ աւարտւում է: Մնացած հատուածը շարունակւում է յաջորդաբար, ինչպէս տպագիր Մաշտոցում[18]: Սակայն ձեռագրում գրիչը փոխւում է, եւ միւս գրիչն անում է իր յաւելումները, որը, կարծես, թեմատիկ առումով նախորդի շարունակութիւնը լինի:

Մաշտոցը, լինելով առձեռն գործածութեան ծիսարան, ընդօրինակուել է իւրաքանչիւր քահանայի կամ եկեղեցու պատուէրով՝ եկեղեցական արարողութիւնների անհրաժեշտութեան համար: Եւ, բնականաբար, ընդօրինակութիւնների ընթացքում չեն բացառւում գրիչների կողմից արուած փոփոխութիւնները, որոնց վրայ մեծ է եւ՛ ժամանակի, եւ՛ տարածութեան ազդեցութիւնը, պակաս կարեւոր չէ նաեւ անհատի գործօնը:

* * *

Գլուխ ԼԶ[19]. Նորահարս աւրհնելոյ (32ա)[20]

Ոմանք տունն կկատարեն եւ ոմանք՝ Ծաղկազարդին: Եւ ասի շարական. «Թագաւոր գոլով քո աշխարհ»:

Հայ ազգագրութեան մէջ եղել է Ծաղկազարդի նշանադրութիւն[21], այսինքն՝ նշանդրէքը կատարուել է Ծաղկազարդին: Այդ օրը եկեղեցում տղայի մայրը կամ մօտիկ ազգական մի կին, նախապէս ստանալով աղջկայ ծնողների համաձայնութիւնը, մի կարմիր քօղ է գցել հարսնացուի գլխին եւ մի խաչանիշ մոմ, որի վրայ կապուած էր կարմիր ու կանաչ թել, տուել է նրա ձեռքը:

Արցախ աշխարհի Վարանդայ գաւառում տղայի մայրը Ծաղկազարդի ծառի վրայ վառուող մոմերից վառում էր մի խաչաձեւ մոմ, որի վրայ երբեմն մի արծաթէ մատանի էր անցկացրած լինում, տանում եւ լռելեայն տալիս էր իր հաւանած աղջկայ ձեռքը: Այնուհետեւ այդ աղջիկը համարւում էր նշանուած[22]:

Հայոց մէջ սովորութիւն է եղել նաեւ, որ նշանաւոր տօներին խնամիներն իրար ընծաներ էին ուղարկում: Դրանք ծիսական նուիրատուութիւններ էին՝ հատիկից ու մրգերից բաղկացած, որոնց մէջ գլխաւորը խնձորն ու նուռն էր՝ որպէս սիրոյ, պտղաբերութեան ու սերնդաճի խորհրդանշան[23]:

Եթէ աղջիկը նշանուած էր, ապա տղայի մայրը մի քանի ազգական կանանց հետ աղջկան եկեղեցի էր տանում: Եկեղեցում կատարւում էր նորահարսի օրհնութիւն, որը կապուած էր վաղնջական ժամանակներից մեզ հասած ծառի ու ծաղկի պաշտամունքի եւ դրանից ակնկալուող օրհնութեան ու պտղաբերութեան հետ: Դրա վկայութիւնն են հարսն ու փեսան, որոնց անուանում են «զոյգ ծաղիկներ» եւ գովերգում են երգերում՝ «Ծաղկոցներում» ու «Թագաւորագովքերում»: Ծաղիկները նաեւ կուսութեան խորհրդանիշ են համարուել, այդ պատճառով էլ Շահապիվանի ժողովում ընդունուել է կանոն, համաձայն որ կրկին ամուսնացողների կամ ոչ կոյսերի համար ծաղկեպսակը պէտք է փոխարինուեր ուռով[24]: Սակայն յետագայում ծաղնուեր ուռով

18 Տե՛ս *Մաշտոց*, Էջմիածին, 1894:

19 Ձեռագրում այստեղից խառնուել է գլուխների համարակալումը, քանի որ գրիչը փոխուել է եւ նա իր յաւելումներն է արել ձեռագրում:

20 Ինչպէս «Թագաւոր աւրհնելոյ»-ն, այնպէս էլ սա, որպէս առանձին կանոն, տպագիր Մաշտոցներում չկայ. այն նոյնպէս մտնում է եկեղեցում կատարուող Պսակի արարողութեան մէջ:

21 **Ե. Լալայեան**, *Գանձակի գաւառ*,- «Ազգագրական հանդէս», Զ գիրք, հտ. V, Թիֆլիս, 1900, էջ 245:

22 **Ե. Լալայեան**, *Վարանդայ*,- «Ազգագրական հանդէս», Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 114:

23 Խնձորը, բացի վերոնշեալ յատկանիշներից, ունեցել է նաեւ մոգական նշանակութիւն: այն պաշտպանել է արական կարողութիւնը: Օրինակ՝ Բուլանըխում պսակի գնացող փեսան խնձորը գօտու մէջ էր պահում (տե՛ս Բենսէ,- «Ազգագրական հանդէս», V, Թիֆլիս, 1900, էջ 113):

24 *Կանոնագիրք Հայոց*, աշխ.՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 437-438:

16 Այս գլուխը բաժանուած է, բայց չի վերնագրուած:

17 Ժողովրդի մէջ կայ տարածուած «Ձեռքը խնդրել» ձեւը, այսինքն՝ ամուսնութեան առաջարկ անել:

կեպսակների փոխարէն գործածւում են ոսկեայ կամ մետաղեայ զարդեր՝ ծաղկի կամ հատիկի պատկերներով:

Բնապաշտական տարրերը դրսեւորւում են ոչ միայն տօներում, այլեւ հարսանեկան ծէսում, որտեղ ծիսական գործողութիւնները նուիրուած էին նոր ամուսնացող զոյգի բարեկեցութեան ապահովմանը:

Բացի Ծաղկազարդի նշանադրութիւնից, եղել է նաեւ Վարդավառի նշանադրութիւն:

Գլուխ ԼԷ. Հանդերձ օրհնելոյ է (87ա)

Այս շարականի միջոցով գովերգւում է նորապսակների հանդերձի օրհնութիւնը, որը կարելի է վերնագրել «Օրհնեա՛, Միածի՛ն, զհանդերձ հարսանեաց».

Աստուածածին երկնանման մախտեայ
վասն մեր փեսայն անվաղճան,
զի հրաւիրեսցես յայսմ հարսանեացս ա-
րասցես արժան,
օրհնեա՛յ Միածին, հանդերձ հարսա-
նեաց...[25]:

Հարսանեկան հնագոյն երգերը քրիստոնէութեան շրջանում վերաիմաստաւորուել եւ, բնականաբար, այլ մեկնաբանում են ստացել՝ հանդէս գալով թէ՛ միջնադարեան հոգեւոր երգերում, թէ՛ շարականներում ու սաղմոսներում: Նման օրինակները քիչ չեն ձեռագիր աղբիւրներում:

Նախաքրիստոնէական շրջանում հարսանիքին թէ՛ հարսը եւ թէ՛ փեսան հագել են ճոխ ու շքեղ հագուստ կամ տարազ՝ իւրաքանչիւրն իր կարողութեան ու հնարաւորութեան սահմանում, բայց ոչ սպիտակ, քանի որ սպիտակ գոյնն աւելի ուշ շրջանի դրսեւորում է: Ազգագրական որոշ շրջաններում սա պահպանուել է մինչեւ Ի. դարը, որտեղ մենք տեսնում ենք նաեւ, որ աւելի տարածուած է եղել անգամ վարդագոյն կամ կարմիր գոյնի հագուստը եւ, իհարկէ, շքեղ զարդերը: Մովսէս Խորենացին յիշատակում է նորահարսի զգեստի վարդագոյն, իսկ փեսայի զգեստի կարմիր լինելու մասին. «Թողէք զհնձանդ պլացարուք 'ի թեւս հոգւոյն, մաքուր աղաւնիք եւ օրիորդք իմոյ հարսանեացս. զվարդագոյն իմոյ հարսնութեանս արկի զզարդ: Նլէք ընդ առաջ արիւնաներկ կարմրազգեստ իմոյ փեսային, զի եւ դուք ընդ իս փայլիցէք արքունական նորա ծիրանեօքն 'ի փառս եւ 'ի զարդ հրեշտակաց եւ մարդկան»[26]:

Սպիտակի գործածութիւնը խորհրդանշել է հոգեւոր մաքրութեան, անարատութեան գաղափարը քրիստոնէութեան շրջանում, իսկ նախաքրիստոնէական ժամանակ կարմիր գոյնը եղել է սիրոյ եւ ուրախութեան խորհրդանիշ. «Կարմիր գոյնը հայոց մէջ առհասարակ չարխափան է եղել. այդ է պատճառը, որ կարմիր հագուստը կանանց տարազի հիմնական տարրն էր կազմում: Կարմիր գոյնն աղերս ունէր նաեւ սերնդաճի հետ»[27]: Սակայն միանշանակ չենք կարող ասել, որ հարսանեկան հագուստը եղել է միայն կարմիր կամ սպիտակ, քանի որ աւելի ուշ Թովմա Արծրունին նկարագրում է, որ «զգեստ հարսանեաց... ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանդ երանդ անկուածոյն... ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն»[28]: Իսկ Տաթեւացին փորձում է տալ հարսանեկան հագուստի յստակ բաժանում. «Նոր հանդերձ եւ զգեստ զարդուց հարսին եւ փեսային՝ են թուով եօթն. չորս բոլոր անձինն է. եւ երեք գլխոյն»[29]:

Միջնադարեան հարսանեկան հագուստի ու զարդերի վերաբերեալ տեղեկութիւն-

25 *Մաշտոց*, Պոլիս, 1807, էջ 21:

26 *Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1865, էջ 315:

27 **Վ. Բդոյեան**, *Երկրագործական մշակոյթը Հայաստանում*, Երեւան, 1972, էջ 473:

28 **Թովմա Արծրունի**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, Պոլիս, 1852, էջ 191:

29 **Գր. Տաթեւացի**, *Ամառան հատոր*, էջ 202:

ները մեզ են հասել ոչ միայն մատենագրական տուեալներից, այլեւ մանրանկարչութիւնից, որը, սակայն, մասամբ է արտայայտում հագուստի ու զարդերի նմուշները, այսինքն՝ չեն նկարագրուել այն տարատեսակները, որոնք գոյութիւն ունէին ազգագրական տարբեր շրջաններում: Իսկ դա կարեւոր է այնքանով, որ թէ՛ հագուստի առանձին մասերը եւ թէ՛ զարդերը առնչւում են տոտեմներին, անգամ անիմիզմի խորհրդանիշներին, ինչպէս նաեւ՝ պտղաբերութեան պահպանմանը եւ դրանց պաշտամունքին: Օրինակ՝ Սեբաստիայում պահպանուել էր հարսի գլխայարդարանքին երեք փունջ-զարդեր ունենալու սովորութիւնը, որը յիշեցնում էր Անահիտ դիցուհու պտղաբերութեան խորհրդանիշը[30]:

Ինչպէս արդէն ասացինք, հարսին ու փեսային հագցնելիս երգում են ծիսական երգեր ու պարերգեր:

Հարսանեկան ծիսական պարերը գոյութիւն են ունեցել հնագոյն ժամանակներից, որոնց միջոցով ապահովուել են ամուսնացող զոյգերի բախտաւորութիւնը, ընտանիքի բարենպաստ կեանքն ու տնտեսական վիճակը, իսկ ամենակարեւորը՝ այդ պարերը տեղի էին ունենում պտղաբերութիւն ակնկալելու նպատակով:

Սրբազան ու ծիսական երգերն ու պարերը, որոնք ունեն պաշտամունքային-հմայական բանաձեւեր (խօսքի ու շարժման), անբաժան են եղել տօնական ու ծիսական արարողութիւնների ժամանակ, պարզապէս տարբեր ժամանակաշրջաններում տարբեր է եղել աշխարհայացքն ու ընկալումը, բայց ոչ էութիւնը:

Այս եկեղեցական ժողովածոյում, տեղ է գտել նաեւ մի պարերգ, որտեղ ակնյայտ է նրա ժողովրդական բնոյթը: Հարսին հագցնելով՝ երգել են այս պարեղանակն ու պարել: Սա ինչ-որ տեղ յիշեցնում է նաեւ «Էգ բարեւ, այ էգ բարեւ,// Էգն արեւուն տանք բարեւ,// Տայ թագաւորին շատ արեւ» *երգը*[31]:

Գլուխ ԼԸ. Պար հանդերձ հագած ժամն ասայ (88ա)[32].

Այս օրիկըս նոր, այս արեւըս նոր, թագաւորըս նոր,
Իմ պարոն մանկտիքս[33] են ազատ, մանկտիկս են ազատ,
Այս ազատ մանկտիքս են ազատ, դուռն ժուռ կու տան,
Իմ պարոն ելն արեգակն, ելն արեգակն:
Հայոց հայրապետ սուրբ Լուսաւորիչ,
Երեք խաչ եհան, օրհնեաց մեր նոր թագաւորն,
Օրհնեաց թագաւորն ու զիւր կիսառուն,
Այլ պաղից մանկտիք որ կային,
Հաւսարի բոլոր, հաւսարի:
Մայրըն Մարիամ սուրբ Աստուածածին երեք խաչ եհան
Ու օրհնեաց մեր նոր թագաւոր, մեր նոր թագաւոր:
Օրհնեաց թագուհին ու զիւր հարսին քոյրն,
Այլ պաղի կուսանքն որ կային հաւսարու բոլոր, հաւսարու բոլոր:
Հրեշտակ յերկնուց անցեր ու օրհներ, անցեր ու օրհներ,
Իմ պարոն թագաւորին Ռ (1000) վաճառն,
Իմ պարոն թագաւորին վաճառն:

30 **Վ. Բդոյեան**, *Հայ ազգագրութիւն. համառօտ ուրուագիծ*, Երեւան, 1974, էջ 106:

31 **Կ. Մելիք-Փաշայեան**, *Անահիտ դիցուհու պաշտամունքը*, Երեւան, 1963, էջ 27:

32 Այս տաղը կայ նաեւ ուրիշ տարբերակով: Տե՛ս ձեռ. 1330, Տաղարան Դ., 1563 թ., *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Ե, 1995, էջ 674: Տե՛ս նաեւ *Հայրենիք*, աշխ.՝ Ա.ս. Մնացականեան, Երեւան, 1995, էջ 962:

33 «Ցոքնականն մանուկ բառիդ, այսինքն՝ մանկունք, որպէս տղայք, պատանիք, երիտասարդք, ծառայք»: Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հտ. Բ, Երեւան, 1981, էջ 206:

Հրեշտակք օրհնելով, մանկըտիք գովելով՝
ճոր-առու քալէ,

Իմ պարոն ընկել քեզ բաժին, ընկել քեզ բաժին:

Այնուհետեւ գրիչն ասացողի նման յաւելում է.

Զեխութեամբ չասես պարըն, որ անուշ գայլսողաց: Ետոյ կըզկըզըն չալէն, որպէս ուզես, այնպէս զեխ է: Թագաւորն շատ (°) ոտաց վերայ չի կանքնէ:

Միջնադարում ընդունուած չի եղել հարսանիքն անցկացնել զեխութեամբ, հարբել, գուսաններ հրաւիրել ու պարել.

«...Ի կնունք եւ ի պսակ ոչ է պարտ արբենալ, կամ գուսան կոչել կամ բոզ, զի դիւաց կոչաւղք են գուսանքն: ... Արդ, չէ պարտ քրիստոնէին ի կնունք կամ ի հարսանիս պար գալ եւ խաղալ, իբրեւ ի մեհեանս դիւաց եւ զամաթ եւ զպարկեշտութիւն ձգել յերեսաց եւ յանձնէ եւ անամաթիլ: Եւ քահանայք, որ մտանեն անդ, զխորհուրդ մկրտութեանն եւ զհարսանեացն մեկնեսցեն եւ պաշտեսցեն, մի՛ անառակ եւ գարշելի բան ոք խաւսեցի»[34]:

Տէր Մարտիրոս պսակ[ի] դրամն շատ ուզէ, եթէ հարսն ու փեսայն խիստ հարուստ է: Երդան եկեղեցին, եւ քահանայն հարսն ու փեսայն խոստովանցնէ եւ ապայ ձեռք ձեռքի տայ որպէս իյ տունն եւ ասայէ զայս պատուէրս.

Տեսէ՛ք որդեակք, աստուածային հրամանաւն եւ կանոնիւք սուրբ հարցն: Եկել էք ի հալալ ամուսնութեան իյ սուրբ պըսակս, Աստուած ըզձեզ անթառամ պըսակին արժանի առնէ, ըզձեզ մինչեւ խորին ծերութիւն հասուցանէ. Ամէն:

---

34 ՄՄ, ձեռ. 2329, Ժողովածու: 1291 թ., Ս. Լուսաւորչի գերեզման (Երզնկա), էջ 258 ա (Յովհ. Երզնկացւոյ «Խրատ հասարակաց...»): ՄՄ, ձեռ. 4669, Ժողովածու: 1675 թ., Պերկամ քաղաք: Յովհ. Երզնկացւոյ «Խրատ հասարակաց...», էջ 102 աբ: Տե՛ս նաեւ Է. Բաղդասարեան, *Յովհան-նէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը*, Երեւան, 1977, էջ 177-178:

Ձեռագիր Մաշտոցի մնացած մասը յաջորդիւ շարունակւում է ինչպէս տպագիր Մաշտոցներում:

Փեսան դուրս հանեն Գ. օրէն եւ երդայ եկեղեցի, ասեն. «Թագաւոր գոլով քո աշխարհ մտէր, ծերքն ոստովք ձիթենեօք» եւ «Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա, եւ զընկերս նորա տացին նմա» շարականները:

Ձեռագրում նիւթն աւարտւում է «Պսակ վերացուցանելոյ»-ի կանոնով: Այս արարողութեան ժամանակ էլ երբեմն կատարւում է Հարսանեաց բաժակի օրհնութեան կանոնը:

Քահանան խաչով օրհնում է բաժակները, ապա լցնում գինով եւ օրհնուած բաժակից տալիս է նրանց՝ ըմպելու:

Պըսակէն ետը Ը. (8) օր պահեն, Ը. օրին երդայ քահանայն, մէկ բաժակ գինի անուշ բան մը դընէ սեղանն: Փեսայն հարսն կանքնեն սեղանն առաջեւըն եւ ասէ շարական.

«Լուսով աստուածութեան քոյ Քրիստոս լուսաւ,

Տօն է այսօր յԵրուսաղէմ, բազմութիւնք բացան դրունըք»:

Երբ եկեղեցուց գալիս են տուն, նստեցնում են նախ փեսային, յետոյ նրա աջ կողմում՝ հարսին: Քահանան վերցնում է պսակը (թագը) եւ նարօտը, խաչակնքում, ապա պսակը դնում է հարսի ու փեսայի գլխին եւ կապում նարօտը: Յետոյ խաչով օրհնում է բաժակները, լցնում գինով եւ օրհնուած բաժակից տալիս է նախ նորապսակներին ըմպելու. Գինին հարսն փեսայն խմեն, ըսկիհը տան քահանային: *Ապա քահանան նոյն բաժակից մէկ ումպ էլ տալիս է բոլոր ներկաներին՝ իբրեւ արիւնակից դարձնելու, տոհմագրման խորհրդանիշ*[35]: *Հարսանեկան ծէսում օրհնւում եւ սրբագործւում է այն ամէնը (հագուստն, անկողինը, բաժակը եւ այլն), ինչը կապուած է հարսի ու փեսայի հետ:*

---

35 *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն* (**Վ. Ս. Թէմուրճեան**, *Գամիրքի հայերը*), հտ. I, Երեւան, 1970, էջ 126:

Արարողութիւնն աւարտւում է քահանայի աղօթքով.

Տէ՛ր Աստուած մեր, որ զամենայն ինչ իմաստութեամբ արարեր եւ հաստատեցեր զտիեզերս եւ զարդարեցեր զհարսանիսն ինքնին: Տէ՛ր, օրհնեա՛ զբաժակս զայս եւ ըզբեսայս եւ զհարսըս...

Այս ձեռագիր Մաշտոցը հետաքրքիր է եւ՛ իր բովանդակութեամբ, որը դուրս է կանոնից, եւ՛ ժողովրդական ու նախաքրիստոնէական տարրերի ներթափանցումով, որոնք ընկած են ծէսի հիմքում:

Այսպիսով, կան Պսակի կարգը ներկայացնող ձեռագիր Մաշտոցներ, որոնք ինքնատիպ ու արժէքաւոր են արարողակարգի յաւելումներով եւ իրենց մէջ ամփոփում են դարերով պահպանուած մշակութային ժառանգութիւնը: